






851, 501

4

ՄԻՊԵԼ

ՔԵՐԹՎԱԾՆԵՐ



Է. ԱՐԱՆԻ

ԻՆՔԱԳՐՈՒԹՅԱՄ
ՅԵՎ ԱՌԱՋԱԲԱՆՈՎ



ՊԵՏԿՐԱՏ ՅԵՐԵՎԱՆ

1935

Հաշիվ
 3087



Սուգեր-շապիկը, կազմը, Վորգացը, անվանաբերը*
նկարիչ Հովն. Շավարսի

✽

Տեխնիկական խմբագիր՝ Տ. Խաչվանյան

Արքայրիչ՝ Վահրամ Մանուկյան

✽

Պետհրատի տպարան. գլավիլիս Ց747. սլաս. 1656.
հրատ. 3182. փրամ 3000.

■

Խ Մ Բ Ա Գ Բ Ո Ղ Ի Կ Ո Ղ Մ Ի Ց

Սիպիլի ֆերքվածների ներկա հատորը խմբագրելիս մենք ձեռքի տակ ենք ունեցել 1902 թ. հրատարակված «Յ ո լ ֆ ե ր» ժողովածուն յեղ այդ ժողովածույից հետո գրված ու հրատարակված ֆերքվածների մեծ մասը:

«Յ ո լ ֆ ե ր» ժողովածուն գետեղեցիկն ամբողջությամբ, պահպանելով նաեւ նրա դասավորման կարգը: Այդ ժողովածույից դուրս յեղած ֆերքվածները դասավորեցինք նրանց տարեթվերի քրոնոլոգիական կարգով: Անթվակիր ֆերքվածները գետեղեցիկն հատորի վերջում:

Ընթերցող լայն խավերին դուրսընթացն ընձեռնելու նպատակով հատորի վերջում գետեղեցիկն դժվարահասկանալի բառերի բացատրական բառարան: Մի քանի իմաստ ունեցող բառերը մենք հիմնականում մեկնաբանել ենք այն իմաստով, ինչ իմաստով վոր գործածել է հեղինակը:

ՍԻՊԻԼՆ
ՈՒ
ԻՐ ՔԵՐԹՎԱԾՆԵՐԸ





1877

THE UNIVERSITY OF CHICAGO



ՍԻՊԻԼԻ ՎԵՐՋԻՆ ԵԿԱՐՔ

Կաթվածահար վիճակում յերկու տարի անկողնում տառապելուց հետո, կողատապի հավելվածական հիվանդութեան հետևանքով, 1934 թվի հունիսի 19-ին, Գնալը կղզում (Կ. Պոլիս) վախճանվեց արևմտահայ քնարերգութեան կարկառուն դեմքերից բանաստեղծուհի Սիպիլը:

Սիպիլը (Զապել Պանճյան, ապա Զապել Տոնեկյան, հետո Զապել Հ. Ասատուր) ծնվել է Կ. Պոլսում (Սկյուտար) 1863 թվի հոկտեմբեր 8-ին (հին տոմ.): 1876 թվին, 13 տարեկան հասակում ավարտել է Պոլսի ճեմարանը: Իր գլխավոր դաստիարակներն են յեղել բանաստեղծներ Պաշատուր Մխարթյանը և Սիմոն Ֆելիկյանը:

Դեռ դպրոցական նստարաններից մանկամարդ Զապելը մեծ սիր է ցուցաբերում դեպի դեղարվեստական դրականութունը, զրոււմ է մի շարք վոտանավորներ, վորոնք մեծ մասամբ տղազրութեան են արժանանում ժամանակակից մամուլում:

Սիպիլի մուտքը գրական ասպարեզ՝ զուղադիպում է այն շըը-

ջանին, յերբ արեւմտահայ բուրժուազիւան ստեղծում եր իր մտա-
փոքական կենտրոնները, մշակույթն ու զբաղանուծիւունը:

Այդ այն շրջանն էր, յերբ Միլիթարեյան միաբանութեան կար-
կառուն դեմքերը՝ Ղ. Ալիշանը, Ար. Բազբաատունին և ուրիշ-
ները, իրենց եպիկական և լիրիկական զբաղանուծիւամբ իշ-
խում էյին մտքերը վրա: Մյուս կողմից արեւմտահայ բուրժու-
ազիւայի յերկասարգ դադարախոտները, — քերթողներն ու
հրատարակազիրները, վկասաններն ու թատերազիրները, սին-
զոտ կերպով տքնում էյին ստեղծելու այդ բուրժուազիւայի սնտի-
սական քաղաքական հետապնդումներն արտահայտող զբաղանու-
ծիւունը: Հիմնականում զբալարելց աղատագրված, կամ աղատա-
զրման փորձեր անող իրենց դեղարվիստական և հրատարակախո-
սական զբաղանուծիւամբ հրատարակում իշխում էյին Մ. Պեշիկ-
թաղլյանը, Գր. Ոսթյանը, Մատթ. Մամուրլյանը, Ռ. Պերպեքյանը,
Ս. Միտաքյանը, Սիմ. Ֆելիկյանը և ուրիշները:

Այդ այն շրջանն էր, յերբ արեւմտահայ բուրժուազիւան սուլ-
թանական Թուրքիայում իր քաղաքական ու սնտեսական գլրբերն
ամբապնդելու, ազգային ինքնորոշման իր ծրագիրն իրագործելու
նպտտակով հրատարակ էր նետիլ նաև ազգահանալաքման, ազգային,
ցեղական մարտական վողով դինվելու լողունը: Յերբ Մկրտիչ
Պեշիկթաղլյանը կատարելով նույն արեւմտահայ բուրժուազիւայի
սոցիալական պատվերը, գրում էր. —

Տուր ինն քու ձեռքդ, յեղբայր Էփ մեմ,
Վոր մերկալ էյին գասված,
Բաղդին ամեն վոխ չարանեց
Ի մի համբայր ցրվին ի բայ.
Ընց ասեղոք ի՞նչ կա սիրուն,
Քան գանձկալի Յեղբայր անուն:

Մեկեղ լացին մեմ ի հրնում...
Յեկեք դարձալ հար անբաման
Խառնեմք արտար յեկ բղինդում,
Վոր բազմամունդ ըլլա մեր չան.
Ընց ասեղոք ի՞նչ կա սիրուն,
Քան գանձկալի Յեղբայր անուն:

Յերբ այելորն Մայրն Հայասան
Տեսնե գորդիս յուր քոյե քոյ,

Մշինն խորունկ վերքն դաման
Քաղցր արսաւոյաց բուծին զոգով,
Ընդ աստեղոք ի՜նչ կտ սիրուն,
Քանն զաննկալի Յերբայք անունն...:

Բուրժուական մտավորականութեան մի շարք կարկառուն ներկայացուցիչներ ֆրանսերենից և յեվրոպական այլ լեզուներից հայտնուած էլին ազգայնական, հայրենասիրական գրական գործեր: Թատերագրները զլիսավորապէս զբաղված էլին հայ ֆեոդալական անոյցալի բռնաճակատական վերակենդանացման գործով: Մեծ վոդեվիլութեամբ բնւծ էլին հանվում հայ արքաներն ու իշխանները, կղերն ու նախարարը:

Այդ շրջանում հտարակական մի այլ խավի, ծայրահեղորեն հարստահարված ու վտանահարված մանր-բուրժուազիայի, արհեստավորութեան ծոցից յիլած, հայ խոշորագույն քնարերգակ Պետրոս Գուրջանը հնչեցնում էր իր քնարի ազկիւտը լարերը: Այդ քնարն իր ժամանակին տասնձին ունկընդրութեան չարժանացով, վարովհետե նա տողորված չէր «ժամանակի վոգու» պահանջներով, նա հեռու չէր բուրժուազիայի սոցիալական պայմերակատարը լինելուց: Նա վոչ միայն չէր համահնչում ժամանակի բերթողական համերգում, այլև մի տեսակ գիտնանս էր մտցնում այդ համերգի մեջ: Իր հոգեբուլի ու լիարժեք տաղերով Գուրջանն արտահայտում էր քաղաքի մանր-բուրժուական, արհեստավորական այն խավերը՝ դաղափարախոսութեւնը, վորոնք քամվում ու հարստահարվում էլին թուրք և հայ գրամատիրութեան ծանր լծի տակ, վորոնք հուսահատված կյանքի հակասութեւններէից, առանց ըմբռնել կարողանալու այդ հակասութեւնների սոցիալական պատճառները, մերթ զգտմնակոծ մակընթացութեամբ ընդվզում էլին Աստծո և յրենքի դեմ, մերթ լուռ տեղատվութեամբ ներամփոփվում իրենց հոգեկան ամայի ու անբովանդակ աշխարհում:

Սիւլիլի գրական սկզբնավորութեւնը զուգադիպում և այն շրջանին, յերբ արդեն լուկ էր Գուրջանի վոգբանվաղ քնարը և լատատեղդի մահից հետո առանձին մի հետաքրքրութեւն էր ստեղծվել նրա թողած գրական ժառանգութեան շուրջը: Սիւլիլը նույնպէս վորդեպէից Գուրջանի դժած բանաստեղծական ուղղութեւնը, այլ յերանդներով և այլ յեղանակներով շարունակելով մանր-բուրժուական սուբյեկտիվ լիրիկայի գուրջանական արագիցիաները:

Չունենալով Դուրջանի ընդզող վողու ուժգնութիւնը, իր մի շարք քերթվածները մեջ կրելով Դուրջանի հեռավոր կամ մոտավոր ազդեցութեան կնիքը, Սիւլիլը նուշնպես իր գժգոհութիւնն և արտահայտում տիրող դրութեան, շրջապատի ու աշխարհի նկատմամբ: Յեթե Դուրջանն իր խռոված հոգու բողբոջի ձայներն և հնչեցնում առ Աստված, ապա Սիւլիլն իր զգայուն սրտի գժգոհութեան մըրմունջներն և արտահայտում առ յերկինք: Փըրված տեսնելով իր վաղուց փայփայած իր ձեռն ու խորհուրդները, կանգնած լինելով մերկ իրականութեան առաջ, ըմբռնել չկարողանալով այդ իրականութեան սոցիալական ներհակութիւններն ու այդ ներհակութիւնները ծնող պատճառները, — Սիւլիլն իր հիասթափութեան գանգատավոր խոսքերն և ուղղում յերկինքին: —

Սակայն յեթ մեր աշխարհին չես դուն քեր
 Ու շանքաճակ ամպերեզ վար չես իջնե,
 Թե չես տեսնե մեր կիրեռու խոյ արի,
 Թե մեր տեսնե քեզ կերեկան խաղալիք,
 Փրե՛, ապա մեր ըղձակքի խոյ քեզեր,
 Դեմքից վրա ձգե քոյեր ու քոսվեր
 Յե՛վ աշխարհի ցած իրեռուն մեջ յեկեր
 Թող ցընարքներս, տեսնա ու հոգիս քաղվից գեր:
 Իսկ դուն, յերկինք, տարեռու մեջ անբզգ
 Իտիս՝ հավես, ուր վոյ բընար, վոյ սիրս կա:

Այս քերթվածն ի հարկե չունի Դուրջանի «Տըտունջը»-ի թափն ու ուժգնութիւնը, սակայն Սիւլիլին հատուկ նրբութեամբ ու համբողջով արտահայտում և «Տըտունջը»-ում տիրապետող գժգոհութիւնը: Յեթե յերկինքն անտարբեր և մարդկային հոգու վողուրումններին, յեթե մարդկանց տեսչերը նրան խաղալիք են թվում, յեթե նա տեր չի աշխարհին, ապա բանաստեղծուհին այս անգամ լուսնին և դիմում, վորը հեղինակի «մտքին թռիչք» և սրտին՝ «ալյուն ու հուր կուտա»: Չէ՛ վոր լուսնին հեղինակի պես չի սիրում վոսկեպաճույճ ճոխ սպարանքները և վոչ ել թավկոչ սըահակներն ու նրանց ամուլ պատրանքը: Նա նուշնպես, քերթողուհու նման սիրում և անտառի, դաշտի ու սարերի քմայքը: Յիվ վերջապես բանաստեղծուհին լուսնի նման ցաղիք ունի: —

Քեզի նման յես այ ցավեր ունիմ, լուսի՛ն,
 Չեն հրմայեր գիս այլ կյանքի փառեքն վոսիմ:

Հոգիս քեզ մը միայն կուզեմ, կապու՛լչս փեճուր.
Նառագայք մը քեզմե, բեկբեկ նրուսյ մը տուր,
Վարուն կառչած վերաքեկեմ իբրեմ վարիկ
Մինչևի բյուրեղ քու ապարանդ որդապարիկ:

Բանաստեղծուհին ղեռ առակերտական նստաբանները պիտի, վոր կա ինչ վոր թղթառ մարդկանց,—նյութական, կրթական վատթար դրուձխան մեջ տառապող մարդկանց մի աշխարհ, վորտեկ տիրապետում ե քաղցը, տգիտությունը, կեղտն ու հիվանդությունը: Նա նույնիսկ փորձում ե սգնության ձեռք կարկանդ այդ աշխարհին:

Գրագիտուհի Արշակուհի Թեոդիկին դրած իր նամակները մեկուամ, նկարագրելով գավառից Պոլիս ընկած ե իրենց տանը ծառայություն անող Հակոբ աղբարին, Սիլվիլը գրում ե, — «Ուղծ մարդը գլուխը կախ, ձեռքերը կուրծքին վրա բարեկ բռնած, աչքերը լիցված, դժբախտ, ամոթահար կը պատասխանե թե իր յերկիրը շատ աղքատ ե, թե հազիվ հաց կը դտնեն ուտելու, թե այրերուն համար դործ չկա, թե կիները մաքրության, առողջապահության վրա դադափար չունին, դեղագործ չունին, ե հիվանդներն շատը կը մեռնին անդարման, թե տղաքը դպրոց չունին, դիրք չունին ու ամառը տաքին՝ ձմեռը ցուրտին՝ փողոցները կը թափառին անտերունջ: Բոլոր որը, բոլոր դիշերը այդ մղձավանջը կը ցանդորդե յերևակայությունս. աչքիս առջևն չի հեռանար թափորը թղթառ տղոց՝ բոկոտն, անլվա, դիտախով, գունատ, հիվանդ, անխնամ: Բանի՛, քանի՛ անգամներ յերգած եմ հոգիս բոլոր քափովը Յեփրատի ծաղկավետ ափերը, Շավարշանի բարումնագեղ շուշանները՝ իմ սկսնակի ձայնավեր տաղերուս մեջ, յեմ սակայն յերբեք չե՛մ խորհած՝ հոն ապրող տարաբաղ ժողովրդին վրա: Մեզի սորվեցուցած եմ շատ մը քաջերու անունները, անոնց պատկերները յերթերանեմ քանակի մը մեջ ամպածրար՝ Իսկ Հակոբ աղբարեն՞քը, անոնց անո՛ք, անոցնական, անուս, անոքի գավակներ՞քը, վորոնք հողին վրա կապրին, յեմ վտանավոր ուղերձներե ավելի լուրջ յեմ կիմնավոր դատարարակուրսն մը պետք ունին իբրեմ մարդ ապրելու համար»*

Հակոբ աղբարներին ե նրանց «անոք, անողնական» գա-

* Ընդդձումները մերն են: Ա.

վահներին բարոյական ոգնութիւն, դաստիարակութիւն տալու նպատակով և, վոր Միպիլը՝ զեռ 16 տարեկան հասակում, հիմնադրում և «Ազգանիւր Հայունայ Ընկերութիւնը», վորն նպատակն և լինում դավառի մեջ հայ ազջկիներ գրադիտ դարձնելու, դաստիարակելու գործը: Այդ ընկերութիւնը 15 տարւա գործունեութիւնից հետո սուլթանական բննապետութիւն արզիլմամբ փակվում և, վիրաբարցիլով 1905 թվից հետո միայն: Բացի հասարակական, կուլտուրական ոգնութիւնից, Միպիլն իր թի շախմատ և թի արձակ գործերով նուշիպես փորձում և պատիերել սոցիալական ներքին խափերի, տատապոդների դոյափիճակը, սգնել, վեր հանել նրանց, սրբել նրանց աչքերի արատսուքը: Սակայն չըմընելով այդ խափերի թշվառութիւն սոցիալական արմատները, չիմանալով նրա դեմ պայքարելու միջոցը և զգալով իր անողնականութիւնն՝ այդ թշվառութիւնը վերացնելու ինչըրում, քերթողունին մի պահ փափազում և դիթ մոռանալ «մարդոց վիշտերը»:—

Յափի, սուգի զնել սերմերն անմամար,
Տառապոդին սրբել շիբերն արչունիին,
Միգնել ամոր հարդ աղբյուրները ցամփին,
Թշվառութիւն դեմ մամառելի քաջարար,
Մայրատիւլ իր ծափալ:

Թե այս սոճին լես կարող լիմ իրամալ,
Մարդոց վիշտերն, վա՛րն կրճայի գեր մոռնալ:

Վոչ միայն նա ուզում և մարդկային վշտերը մոռանալ, այլ և նա չի ուզում լսել այդ մտակն, նա ուզում և մոռանալ մարդկային կեղծիքն ու նյութամոլութիւնը, նա ուզում և իր ցնորքներին հանձնվել և գրանսով փակել աչքերը սոցիալական ներհակութիւններին սասջ:—

Մի՛ բսեք թե բարոյքունն և կեղծիք,
Թե ծախսը կննիւր մյն և սեգուրված,
Թե վաչից կա ազնիվ, վոչից գեղեյիկ,
Թե պատսամն են սերը, ծաղիկ ու ներված:

Մի՛ բսեք ինձ, բույն և բուրումը գարնան,
Ախտի սերմեր ջուրերն ունին խած տկից,
Թե լուսազեղ ցորերն ամպոպ կը դառնան,
Յեզերեն և լոկ մարդ կյանքի բաժակին:

Վո՛ճ, մի՛ բսեք թե ձայները կը խարենց
իրենց անկեղծ հնչյուններովը ծայ ծայ.
Մի՛ ըսքափե՛ք սիրս իր անուօ օազնապե՛ն.
Թողե՛ք ինձի յերազներովըս պանծալ:

Մի՛ բսեք ինձ թե մարդիկ չեն անձնըվեր.
Թե օսներով ըստը. յեցուն ե ախարե՛ն,
Յե՛կ ուխտերը, յերգումները ողն ի վեր
Կը վարասին, ինչպես թերթեր հողմավար:

Սիւպիլի պոեզիան, ինչպես հատուկ է մանր-բուրժուական պոե-
զիային՝ հակասական է, իր դադափարներով հեղհեղուկ, անկայուն:
Յեթե մի տեղ նա մարդկային վշտի արցունքները սրբել չկարողա-
նալով փափագում է դեթ մոռանալ այդ վշտերը, յեթե մի այլ տեղ
նա պարզապես չի ուզում լսել թե մարդիկ անազնիվ են, անձնվիր
չեն, թե ստոր շահերով լիցված է աշխարհը և այդ պայմաններում
նա յեթէ է փնտռում դեպի լուսինը թեկելու մեջ, ապա մի այլ տեղ՝
նա պարզապես չի կամենում ապրել և շնչել այրողիսի աշխար-
հում: —

ինչո՞ւ հեծել, ինչո՞ւ հեկալ,
Յերբ վագեսպառ աղաղակովդ անհուն, անծայր
Դուն չես կարող պահ մի վերջ օայ
Թե՛վառւքյան հորդ հեղեղին ամպրոպավար,
Վոր կողոզե համայն աեխարհ:

Կամ թե.—

ինչո՞ւ ապրի, քափել արցունք,
Յերբ չես կարող բսել դժբաղ եակներուն
Զորս կը օանչե քաղցն ու պատու.
„Մի՛ գրկովի՛ք, անս՛ մտափնս, անս՛ արցուն,
Առե՛ք, կերե՛ք, ապրե՛ք յե՛ք դուք“:

* * *

Սիւպիլի քնարն ունի առանձնահատուկ մի լարը Դա կնոջ լարն
և Բաղաբի կինը, նրա սեթեկեթանքն ու պճնամոլությունը, նրա
ժանյակների ու ժապավենների սերը, գեղեցիկության ու հմայքնե-
րի տիրանալու նրա տենչը՝ իր նուրբ արտահայտությունն է դտել
Սիւպիլի պոեզիայում, վորն առանձնակի մի յերանդ է վողջ արեմը-
տանայ քնարերգության մեջ: Նա մերթ նկարագրում է ժանյակները՝
սիրահար մանկամարդ կնոջը, վորն իր ժանկահարդ գեղեցիկու-
թյունը ցուցադրելու պատճառով թատրոնում մըսում, հիվանդա-
նում ու մեհնում է («Ժանյակները»), մերթ մորմոքում է ծաղկախ-

Տաշիր
3087



տով հիվանդացած ու դեմքի գրավչութիւննից գրկված ազջկա հոգեկան տանջանքն ու ինքնամահացումը («Պարապիբրջիկ հիվանդը»): Մերթ մխրճվում յեկեղեցու պատերի տակ խունկի պես հալվող «հեք կնոջ» սրտի խորշերը («Պունկիլը»): Մերթ կ'մտնում մեծնաստանի մռայլ կամարներէից ներս, ուր հոգեպես տառապում է յերիտասարդ-կույսը, վրէժն ապրել և սիրել և ուզում:—

Ապրել կուզեմ. անոն յերկինք ցույց կուտան:
Սիրել կուզեմ. կը գոզեմ,,Սեր և Աստված“:
Յե՛կ կը պսամնն Դավիթը, Հորն ու Հաւրան,
Կրտն. ,,Միայն մահվան համար ենք հասկում“:

Բոցեղ շուն մը կը խքնցրեմ յես, սիր մը սոս,
Վար խառնըվի տեղոս հոգվույս հորձանին,
Յե՛կ սաղմոս մը կը դնեմ, ա՛հ, բարձիս սակ,
Խալ մ'ալ փայտե ընդդեմ սրտի փորձանկն:

Այդ փորձանկներն յես կ'երազեմ անդադար,
Կլանիի բոլոր մեծ պայմաններն, հուրն անհուն,
Աշխարհի մեջ չընկն բաժինս իմ առդար,
Յե՛կ կը բողոմ յերկինքն իրեն սուրբերուն:

Սիւլիլի քերթվածները շնչում են կանացի մեղմութեամբ ու բնբռութեամբ: Յուրահաստուկ մի նրբութեան, յեթե կարելի յիտանել «կանացիութեան» սղճնում և այդ քերթվածները: Նա դիտելնութեան ամենամանրնայն յերկուցթիւնիցը բանաստեղծութեան նյութի գարձնիկ և վարպետութեամբ ստեղծագործել այդ նյութը: Մերթ մանկան միամտութեամբ և անմեղութեամբ նա վերջում և ամառն արեւի ջերմ մի շողը սրվակի մեջ պահել ձմառն՝ յբտերին նրանով ուրախանալու համար («Արևու ճառագայթը»): Գոյգուրանոք ու խանդաղատանքով նա նկարագրում և անըստփր դիշերից տարազիլ ու թըջված թիթեռնիկի ծվարումն իր թղթիքի վրա («Թիթեռնիկը»): Յե՛կ մինչ բանաստեղծուհին նրա գեղեցիկութեամբ՝ իր չոր ծաղիկփունջը գարդարելու խոհերով և տարված, թիթեռնիկը խանձելով իր հրատենչիկ կյանքը՝ լամպի վրա թեւախուր, ընկնում և վար նուրբ արվեստով հորինված այս գոգտըլի բանաստեղծութեանը Սիւլիլի լավագույն եջերից մեկն և հանդիսանում:

Սիւլիլի քերթվածների մեծագույն մասն ոժտված են բանաստեղծական նուրբ արվեստով և խոր հուզականութեամբ: Նրան որսար են մնացել հրապարակախոսութեան տարրերը, վարձոք տիրապետող ելին իր ժամանակի բանաստեղծներից շատերը ստեղ-

ծագործություններում: Միպիլն արևմտահայ քնարերգության մեջ մտցրեց նոր յիւրանդ, նրբության, ինտիմության, կնոջ ներաշխարհի քնարերգությունը:

Միպիլի քնարերգությունը դերձ չի յեղել ազգայնական տրամադրություններից, վորպիսին առանձնապես նկատվում է նրա «Հայ լեզվին» ձոնված քերթվածում:

Հատուկ ուշադրության արժանի յե Միպիլի լեզուն: Չնայած դրաբարի և աշխարհաբարի հրապարակային թունդ բանավեճերի ժամանակ, ախոյան ունենալով Բյուզանդ Քեչյանին, նա յեռանդուն կերպով պաշտպանում եր գրաբարը, սակայն իր քերթվածների մեջ նա շատ հեռու մնաց դրաբարից: Միպիլի լեզուն իր մաքրությամբ, ճոխությամբ և սլափերավորությամբ կարող և մրցել 19-րդ դարի վերջի արևմտահայ բոլոր բանաստեղծների լեզվի հետ, միշտ մնալով առաջավորը: Յեթե Դուրյանի, Պեչիկթաղյանի, և մյուսների քերթվածներում աչքի յիբ զարնում գրաբար բառերի ու վեճերի առկայությունը, ապա Միպիլի ստեղծագործություններում նրանք բոլորովին բացակայում են:

Քերթվածներից զատ, Միպիլն արտադրել և նաև արձակ եջեր: Առանձին գրքերով լույս են տեսել նրա «Աղջկա մը սիրտը» վեպը և «Կնոջ հոգիներ» պատմվածքների ժողովածուն, վորն ավելի ուշագրավ է: Իբ արձակ գրվածքներում, ավելի իրապաշտ կերպով, Միպիլը պատկերում է քաղաքային կնոջ պճնամոլության ու կնոցադի գունեղ գրվագները: Դիտելով սոցիալական ներհակությունների առանձին յիբույթները, արձանագրելով հարստության և աղքատության միատեղ կենակցելը և իրար հեզնելը, Միպիլը փորձում է այդ ներհակություններն իրար հաշտեցնել բուրժուական բարոյախոսության միջոցով:

Մեծ է յեղել Միպիլի դերն արևմտահայ կրթական մանկավարժական ասպարիզում: Թե վորպես փորձված ուսուցչուհի և թե վորպես դասադրքերի, դպրոցական ձեռնարկների հեղինակ, Միպիլն անդնահատելի ծառայություն է մատուցել արևմտահայ դպրոցին: Ինչպես նախորդ եջերում արձանագրեցինք նա հիմնադրուհին և յեղել «Աղջկանվեր Հայուհյաց Ընկերությանը», վորը հետապնդել է գլխավորապես կրթական նպատակներ: Այդ նպատակով տարվելն է գլխավոր պատճառը, վոր Միպիլն իր կյանքի 70 տարիների ընթացքում գեղարվեստական դործեր քիչ է ար-

տաղը ել: Ուշադրալ են նրա մանկավարժական-կրթական աշխատութիւնները, ինչպէս որինակ՝ «Գործնական քերականութիւն արդի աշխարհաբանի» (Ա., Բ. և Գ. դիրք), «Գործնական դասընթացք ֆրանսո-հայ թարգմանութեան» և այլն: Իր ամուսին, հայտնի հրապարակադիր Հրանտ Ասատուրի հետ միասին հեղինակելի է «Թանգարան հատընտիր հատվածներու» դասադրքի Ա. (տարրական), Բ. միջնակարգ) և Գ. (բարձրագույն) հատորները: Բացի այս ամենը, Սիպիլը կես դար անընդհատ իր վողջ ուժերն ի սպաս է դրել յերկրասարդ սերնդի դաստիարակման գործին, — վաբերով ուսուցչուհու պաշտոն՝ մինչև իր կաթվածի որը, յերբ արդեն 70 տարեկան էր:

Իր կյանքի մայրամուտին, հեռվից դիտելով և հաղորդակից լինելով Հայաստանի սոցիալիստական շինարարութեան ու մշակութային առաջընթացի փաստերին, Սիպիլը վերջին իր ուժերը կամենում էր սպասարկութեան բերել այդ առաջընթացին: Ինձ ուղարկած իր նամակներից մեկում, 1932 թվի ապրիլի 27-ին հարգելի քերթողուհին ի միջի այլոց գրում էր — «Էր բազմայլ ոգտակար քլլալ ձեղի, բայց պակաս մը չեմ տեսներ ձեր աշխատութեանց մեջ լրացնելու համար»: Ապա ակնարկելով իմ կողմից իրեն ուղարկված խորհրդային գրողների գրքերն ու «Արևմտահայ բանաստեղծները» ժողովածուն, նա մեծ վողեորութեամբ բացականչում է, — «Ձեր ուղարկած գիրքերը ամենուն տղի վոր կարդան... վոր ամեն մարդ հասկանա թե ի՞նչ բարբարոս մարդիկ են պողշեմիքները»: * Իր նամակի այս տողերով, Սիպիլը վող միայն կծու ծաղրի յե յենթարկում բողշեիկներին «բարբարոս» համարող հայ ֆաշիստներին, — դաշնակցականներին, — այլև հավատ է հայտնում, վոր միայն բողշեիկները, միայն խորհրդային իշխանութիւնն էր, վոր ստեղծեց Հայաստանի տնտեսական, քաղաքական, մշակութային առաջընթացի բողբ հնարավորութիւնները: Այդ իշխանութեան մեջ է, վոր լիապէս արժեքավորվում են անցյալի մշակութի բողբ լալ եջերը, այլև ըստ արժանութեան գնահատվում են գրականութեան, արվեստի, գիտութեան բողբ ազնիվ մշակները: Յեւ վերջապէս միայն այդ իշխանութեան շնորհիվ է, վոր վաստակավոր հեղինակի մահից հետո հրապարակ է հանվում նրա քերթվածների ներկա ժողովածուն:

* Ընդգծումը հեղինակինն է:

3 П Л Ф Е Р

ՆՇԱՆ-ՊԱՊԻՐՈՒՆ ԿՈՏԵՆԱԳԱՐԱՆ


ԶԱՎԷՆ Է. ԱՍԱՅՈՒՐ

(ՍԵՊՏ.)

Յ Ո Ղ Ք Ե Ր

Կ. ՊՈԼԻՍ
ԿՐԻՏՈՆ ՆՇԱՆ-ՊԱՊԻՐՈՒՆ
1902

„Յ ո Ղ Ք ե Ր“ ի առաջին հրատարակության ճապիկը



Ա Մ Պ Ը

Ա՛յ լուսեղեն, ուր յերազներս ապրեցան,
— Յերկիրնքին մեջ, լուսնին աշխարհն արծաթի,—
Ու քեզի հետ փըշրած կ'իյնան ցիր ու ցան.
Այդ փըշրանքեն տաք տաք արցունք կը կաթի:

Բաժնըվելով քու շողերեզ մըտերիմ,
Հովերու բիրտ հարվածին տակ կը փըրթիս.
Կյանքդ յերկիրնքն եր. հողը կըլլա քեզ շիրիմ,
Ուր թաղվեցան հուր տենչանքներն իմ սըրտիս:

Յեվ կը ժըպտին վերեն արևն ու յեթեր
Մեր վիշտերուն անկարեկիր ու անփույթ,
Փայվալեցով թևերնուն մեջ նոր ամպեր,
Նոր սարսուռներ ու յերազներ ջինջ կապույտ:

Մինչ մենք զոհեր սիրտ անհուն սլապակին՝
Անձրև կուլաս դուն, յես՝ արցունք ցավադին:

Ս Ո Ս Ի Ն Տ Ա Կ

Կը մարեր հետին ճաճանչն արևուն
Լեռներուն կողեն ինկած մինչև ծով,
Յերբ ծաղկահաս մայրն հուզմամբ սարսրտոն՝
Կը խոսեր անոր իր հոգվույն բոցով:
Կը մարեր հետին ճաճանչն արևուն:

Հովանվույն ներքև սոսին դարավոր
Տալով կաթողին իր հետին համբույր,
Այբը կը մեկնեք հանձնելով անոր
Զբքնաղ մանկիկ մը խարտյաշ վարդարույր,
Հովանվույն ներքև սոսին դարավոր:

«Մի՛ լար, միշտ հիշե՛ մեր քաղցրիկ որեր,
Կ'ըսեր ցավագին հայրը մըտահոգ,
Դուն Արեւն ունիս, իր ժրպինտն ու սեր
Կըրնան ըսփսփել թախիծդ ու մորմոք:
Մի՛ լար, միշտ հիշե՛ մեր քաղցրիկ որեր»:

«Յես ձեզմե՛ն հեռու կ'երթամ տարագիր,
Թո՛ղ վոր նայվածքեդ քաղեմ քիչ մը ուժ.
Վորդիս շատ սիրելի ինձի խոստացիր
Վոր հոգի առնեմ քու ձայնեդ անուշ:
Յես ձեզմե՛ն հեռու կ'երթամ տարագիր»:

Հըրուտ աչքերը արցունքով լեցուն՝
Ձայնով մը նըվաղ, հազիվ լըսելի,
«— Կ'երգնում թե, բաավ, կյանքս, հոգիս համբուն
Պիտի նըվիրեմ վորդվույս և քեզի՞»,
Հըրուտ աչքերը արցունքով լեցուն:

Մինչ հայրն այդ ուխտին վըրա կը ցընծար
Գուժկան կառաչ մը՝ թըռնով ահարկու
Հանկարծ կատարեն սոսին բարձրածայր,
Բու մը ըսկըսավ հեծել «Հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ»,
Մինչ հայրն այդ ուխտին վըրա կը ցընծար:

Մուժը գիշերվան կ'իջներ լեռներն վար.
Իր ձիով ճերմակ ա՛լ անհետացեր՝
Մեկներ եր արդեն հայրը սըրավար,
Դեռ կը լըսվեյին սև բուխն կոծեր:
Մուժը գիշերվան կ'իջներ լեռներն վար:

Հովանվույն ներքև դարավոր սոսին
Մայրը իր վորդվույն հետ նըստած մինակ՝
Կը գիտեր արմույն հուսկ ցուքը լույսին,
Վոր կ'երթար պահվիլ լուրթ ծովուն հատակ:
Հովանվույն ներքև դարավոր սոսին:

Առույգ արդա մ'եր Արեյն ալ հիմակ,
Հասակը իր մոր կը հասներ ուսին
Սիրտը կըրակ եր ինքը բոց համակ՝
Աղվոր եր դեմքն ալ դերթ պայծառ լուսին:
Առույգ արդա մ'եր Արեյն ալ հիմակ:

« — Մա՛յր, կ'ըսեր, ինչո՛ւ հայրիկս ուշացավ.
Տես ըստվերները դաշտին մեջ լեցան:
Յերթանք քեզի հետ ձոր, դաշտ ու անձավ,
Նայինք, կորսնցո՛ւց արդյոք իր ճամբան:
Մա՛յր, կ'ըսեր, ինչո՛ւ հայրիկս ուշացավ?»

« — Համբերե քիչ մ'ալ, Արեյս իմ սիրուն,
Պատասխան կուտար մայրիկն անկասկած.
Ա՛լ պիտի չողբանք քեզ հետ որն ի բուն,

Զի հորըդ դարձին վայրկյան մը մընացի
Համբերե՛ք քիչ մ'ալ, Արեւիս իմ սիրուն»:

Զվարթ եր սիրտն ալ ճիշտ իր դեմքին պես,
Քանզի կը սպասեր սիրելիվուն դարձին,
Յեւ ինչ պարծանքով, ինչ հաճույքով վեո
Կ'երագեր ցույց տալ անոր իր վորդին:
Զըվարթ եր սիրտն ալ ճիշտ իր դեմքին պես:

Բայց աըզուն սիրտը հուզմունքով կ'եռար,
Յեւ չուղեց լըսել խրնդըանքն իր մորկան,
Յելավ բարձրաբերձ այն սոսին կատար
Տեանելու համար հայրը սիրական:
Զի տըզուն սիրտը հուզմունքն կ'եռար:

«Ա՛խ, մայրիկ, գոչեց ծառին գագաթեն,
Կարավան մ'ահա կուգա դեսլի մեզ,
Շատ ձիավորներ շուտ շուտ կը դըողեն.
Հայրիկս ալ հետ ե, յեկնւր վոր տեսնեա
Ա՛խ, մայրիկ», գոչեց ծառին գագաթեն:

Հորը կարոտեն հողին սիրարծարձ
Փութաց սոսիեն իջնել հե ի հե,
Վոտքը սահեցավ, վար ընկավ հանկարձ,
Փըշըեցավ գանկը ժայռերուն վերև:
Հորը կարոտեն հողին սիրարծարձ:

Մութը գիշերվան կ'իջներ լեռնեն վար,
Անտառին խորեն իր ձիով ճերմակ
Հայրն ուրախ զըվարթ հասավ սըբավար
Գըրկելու հույսով իր սիրուն գավակի
Մութը գիշերվան կ'իջներ լեռնեն վար:

Հովանավուն ներքև սոսին դարավոր,
Մայրն, վոր խելահեղ լալով կը թասար,
Յուցուց խեղճ հորը իր գավակն աղվոր
Վոսկրակույտի մը յեղած հավասար:
Հովանավուն ներքև սոսին դարավոր:

Յեւի հանկարծ «Հնւ, հնւ», վայեց բուն վերին,
Վոր կանխով լացած եր մահը մանկան,
Մինչ խույս կուտային հեք հորն ալ սըրտեն
Սիրո, հըրճմանքի յերազներն այնքան.
Ու դարձյայ «Հնւ, հնւ», վայեց բուն վերին:

1890

ՄԵՆԱՍՏԱՆԻՆ ԿՈՒՅՈՒՐ

Կես դիշեր ե. սենյակիս մեջ միայնակ՝
Կանթեղ չունիմ, վոչ ալ յերկինքն ունի շող.
Իր լույսն հեաին մարեց դարպասն ու տընակ.
Յեւ մընացի իմ խոհերուս հեա մաշող:

Կը թափառին շուրջս ըստվերներ թանձրահոծ
Մերձենալով հեռանալով համբարար,
Յեւ կը լըսեմ իրենց վայուռն վողբակոծ
Յերբ կանգ առնել կուզան հողնած ու մուրար:

Տըխուր մըտքիս ուրվականներն են համակ,
Յընորբ հողվույս հաղիվ հասած արբուների,
Յեւ մինչ կ'անցնին որերըս ցուրտ ու ցամաք՝
Անոնք կուտան ինձ ըստփանքն արցունքի:

Զի մինակ եմ հոս դեմքերու հեա տըրտում,
Կույսերու հեա, վորոնք չունին իղձ ու խանդ,
Վորոնց ձայնին վանկերն՝ աղոթք անպատում՝
Կը խորտակեն յերազս ու հույս մանավանդ:

Ապըլի կ'ուզեմ. անոնք յերկինք ցույց կուտան
Սիրելի կ'ըրձամ. կը գոչեն. «Սեր ե Աստված».
Յեւ կը պատմեն Դավիթը, Հորն ու Ղուզան.
Կ'ըսեն. «Միայն մահվան համար ենք հաստված»:

Ձուր կը վառե յերկինք արևն ու լուսին,
Ձոնելով կյանք ծաղկին, դաշտին ու մարդուն,
Յես կը դառնամ նորեն համեստ այն լույսին
Վորուն ներքե լուս կը հըսկե աչք մ'արթուն:

Բոցեղ շունչ մը կը խընդրեմ յես, սիրտ մը տաք
Վոր խառնըվի տենդոտ հոգվույս հորձանքին,
Յե՛վ Սաղմոս մը կը դընեն, ա՛հ, բարձիս տակ,
Խաչ մ'ալ փայտե ընդդեմ սըրտի փորձանքին:

Այդ փորձանքներն յես կ'երազեմ անդադար,
Կյանքի բոլոր մեծ պայքարներն, հուրն անհուն,
Աշխարհի մեջ չընչին բաժինս իմ արդար,
Յե՛վ կը թողում յերկինքն իրեն սուրբերուն:

1892

Յերկինք անբավ, սվ եռթյուն վեհ, անճառ,
 Գաղտնիք անհաս, տեսիլ վըսեմ, սուրբ տաճար,
 Այն խորհուրդն ես դուն զոր հոգիս դեռ մատաղ
 Միշտ կը պաշտեր թե ալեկոծ, թե խաղաղ
 Դուն այն առանցքն ես, վորուն շուրջ վազվըզուն՝
 կը թեյին իմ ցընորքներս սղասուն,
 Յեվ դմբեթիդ վերե սլայծառ ու շքեղ
 կը ժբայտեր ինձ լույսերու բուլլ՝ մը բյուրեղ
 Անուշ պատկերդ ու դեմքդ աղվսր լուսավառ
 Ճառագայթներ կուտար սըբախ իմ խալար
 Ինչպես արփվույն լուսաճաճանչ կարմիր շող
 կը փաբատե հոծ ամպերուն սև ամբոխ,
 Վորոնց ծոցեն խիտ խիտ շանթեր ու փայլակ
 կը խոյանան ժայթքելով թոն ու կայլակ
 Ավանդ, յերբեք իմ ըղձսնքիս չեղար խուլ,
 Որորեցիք միշտ հույսերով զիս խաբխուլ,
 Արծաթձելու համար տենչերս ու յերազ,
 Ինչպես կին մը վոր կը պըչըի հեղանագ,
 Միշտ ցույց տալով նոր հըմայքներ ու հրապույր,
 Բեզ գերեցիք նույնիսկ միտքերն անհամբույր
 Վճհ, ինչ ես դուն, ծնվ անմատույց ու խորին,
 Ո՞ւր ե արդյոք ըսկեզդ ու ծայրըդ բուկին
 Ե՞մի մըն ես արդյոք և կամ ոին պատկեր,
 Պատրանք վաղանց, ինչպես բուրբ վայելքներ
 Միթե սուտ չե՞ ինչ վոր խորհուրդ կը կոչեն
 Բուրբ բույրերն ու սերերը պատրանք չե՞ն
 Յեվ մեր սիրտը՝ հիմար մեղու, հեք մանկիկ,

Ծաղիկներու շուրջ կը հածի թափառիկ,
 Կամ լուսատարի ողասլացիկ խոլ թիթեռ՝
 Միշտ կը զոհվի բոցին վոր զինք կը դուռթեր,
 Իսկ թե եակ ես կամ թե վոգի, նվ յերկինք,
 Ունիս անշուշտ կիրքեր վորով կը մըրկինք,
 Գիտես ինչպես մութին մեջ խեղճ միջատներ
 Կը փափագին թևել մինչև գագաթներ,
 Գիտես ինչպես կ'անձկան քեզի հասնելու,
 Թեև խոնարհ, թեև կամքիդ միշտ հըլու,
 Թե լուսեղեն եակներու սիրույն լոկ
 Բաց են սըրտիդ դըռներն ամուր անողոք,
 Յեվ մեր աղոթքն ու պարատանք յեթե պիղծ
 Քեզ կը թվին, նախ փարատե մեր թախիծ.
 Յեվ հետո տես թե լուսխնեզ ալ աղվոր
 Չե՞ն շողշողար մեր ճակատներ սըգավոր
 Այլ... կը ճանչնամ ըզմեզ արդյոք, թե դուն ալ
 Բուռըն տենչով կ'ըղձաս մեզի մոտենալ,
 Յեվ որենքին անաչառ ձեռքն յերկաթե
 Ըզքեզ ամուր ցանցերու մեջ կը պատե,
 Կը ճանչնամ զլա, թե կ'երևամ քեզ անշունչ,
 Ինչպես շյուղերն ու ցորեններն վոսկեփունջ,
 Վորոնց շըրջունն ու ձայներուն նուրբ սարսուռ
 Մեզի համար հավերժություն մըն է լուռ
 Այս խոհն, ավանդ, կը մըթագնե կայծն հոգվույս,
 Կ'ուզեմ ըլլալ յես քու քերթվածդ արշալույս,
 Կ'ուզեմ կյանքիս բոլոր ժամերն ու վայրկյան
 Քու ձեռքովդ իսկ կազմեն անհուն, սուրբ մատյան,
 Ուր տենչանքներս քեզի համար վառվառին,
 Ինչպես խունկը ծոցն վոսկեշող բուրվառին.
 Թո՞ղ, նվ յերկինք, թո՞ղ, կապուտա՛կ դուն կամար,
 Ըզքեզ հոգվույս հուզված ձայնով գոչեմ մայր,
 Յեվ լուսնակդ ալ քույր մ'ըլլա ինձ կարեկից,
 Վուրուն պատմեմ բոլոր հոգերս ու՛ կըսկիծ:
 Թո՞ղ վոր նայիմ աղվոր դեմքիդ հրաշափառ,
 Յեվ հիացման խոր ըզգացմամբն անբարբառ
 Ծունդի գալով՝ աղաչեմ քեզ վոր պարզես

Խորհուրդներուդ անհաս, անբալ ասպարեզ,
 Յեթե ժըլիրճ զիս համաբիս սակայն միշտ,
 Բաղձանքս յեթե քեզ յերևա ամբարբշտ,
 Հիշե թե զուն մայր յեղար ինձ, և թե զուն
 Լստեղծեցիր այս զըձուձ կալիս յետանդուն:
 Ի՛նչ մեծ իդձեր ավիր նյութին այս չընչին
 Վոր աննցմով յեղավ եակն առաջին:
 Դուն ես վոր միտքս անգաղար քեզ կը ձըգես,
 Մարզն անգունդին հըրայքը չուներ առանց քեզ:
 Ծովուն ալքը, ծրմակին մեջ, վիհին խոր
 Ժայռին ծայրն իսկ կը հետևիս զուն անոր:
 Անպարազիր տեսարանեզ սոզըված,
 Ան ալ կ'ըզձա անհուն ըլլալ, սլ Ատոված,
 Յեզ հանցանք ե միթե սուրալ ամպին հետ,
 Թըռչիլ մինչև արևներուն արահետ,
 Խընդրելու թև հրեշտակներեն, այգեն հուր,
 Վոգիներեն գոնե բառ մը հեշտալուր,
 Վորուն ճաշակն յերագներու մեջ անցալ՝
 Իրեն վոսկի բաժակներով արվեցալ:
 Սակայն, յեթե մեր աշխարհին չես զուն սեր
 Ու շանթարձակ ամպերեզ վար չես իջներ,
 Թե չես տեսներ մեր կիրքերուն խոլ ալիք,
 Թե մեր տենչեր քեզ կ'երևան խաղալիք,
 Փըշըն, ապա, մեր ըզձանքին խոլ թևեր,
 Դեմքիզ վըբա ձըգե բոցեր ու բսավեր
 Յեզ աշխարհի ցած իրերուն մեջ եեթ
 Թոզ ցընորքներս, տենչս ու հոգիս թաղվին զեթ:
 Իսկ զուն, յերկինք, սարբերու մեջ անըզգա
 Իշխե հավետ, ուր վոչ բընար, վոչ սիրտ կա:

1885

Մունկը կը ծըխի խորանին առջին
 Բուրվառին մեղմիկ ճոճումոյն արծաթ
 Մուխի վարանք մը պըլըված խաչին՝
 Մըշուշով կ'ոծե սուրբերուն ճակատ:

Պաղատանքներու սարսուռներ յերկայն
 Կամարներուն տակ կը մարին տակալ,
 Մոմերու տըժգոյն բոցերը լալկան
 Բրթթոց աչքերով կը հեան կարգավ:

Սուրբ սյուներուն մոտ շրդարշ մը ճերմակ
 Գաղտուկ հեծքերու զոդով կ'երերա,
 Սիրա մը փաթթըված ըստվերով համակ
 Մունկին պես լըսին հրաայրքով կ'եռա:

Մունկը կը ցըղնի բուրվառին ծոցեն
 Ու յեթերն ի վեր կ'ելլե խոյանքով,
 Նյութ եր, բույր կ'ըլլա լափվելով բոցեն
 Իր կյանքը ցողված յույսի յերանգով:

Հեք կընոջ սիրտն ալ, վոր հոն կը մըխա,
 Պիտի չաղատի իր պատյանեն կուռ,
 Մինչև վոր հալի, լուծվի, տարբանա
 Լափվելով բոցեն տենչերուն մաքուր:

1901

Վողջույն կուտամ անհուն սիրով քեզի, լուսնահ,
 Ո՛վ մըտերիմ տըխուր հոգվույս իմ միայնակ,
 Թե չըլլայիր դուն, և շողերդ այդ փայփայուն
 Չըշտեյին սըլացքն հոգվույս յերազներուն,
 Փոս մը կ'ըլլար կյանքըս, թափուր և ամայի,
 Փոս մ'որ մըռայլ դամբաններու լոկ կը նայի,
 Վորուն յեզերքն ա՛լ չի փըթթիր ծագիկ և բույս,
 Ուր կը մոռնա ցողել արևն իր արշալույս
 Ու կ'անցնեյի ըստվերի պես կյանքին մեջն
 Քըշվելով հոն ուր կը հեծեն, կը հառաչեն,
 Կամ նըվազած կանթեզի պես շիջելափառ
 Կը կըքեյի ամեն հովի յես անքարքառ
 Բայց դուն, լուսնահ, քանի վերեն ինձի ժըպտիս
 Մըտքիս թըռիչք, ավյուն և հուրք կուտաս սըրտիս.
 Քանի թողած շողերու հույն յեթերաճեմ
 Պատուհանիս առջին կուգաս յերբ կ'աղաչեմ,
 Քու ըզգայուն, սիրոյ անուշ սըրտիդ վըբա
 Տաք արցունքով լեցված՝ հոգիս կը գուրգուրա
 Վնճ, վճրքան բարձր ես, վորքան սուրբ և ինչ վըսեմ,
 Նըշույներուդ ներքև Աստվածն յես կ'երազեմ
 Տիեզերքի վողին ես դուն, թե վոչ հայլին՝
 Վորուն մեջն սըրբություններ կ'արտափայլին
 Դըթությունն ես կամ զիցուհին դուն Աթենաս,
 Վոր խըրճիթին ու դամբանին կը մոտենաս,
 Յեվ յերբեմն ալ նոճիներուն մըշտազլշեր,
 Վորոնք տըրտում են, ինչպես մահն ու իր հուշեր
 Դուն չես սիրեր վոսկեսպաճույճ ճոխ ասպրանք,
 Վոչ թավիշք սըրահակներ, ամնւլ պատրանք.
 Քու քըմայքդ են անտառն ու դաշտ, սարերն արձակ

Ուր կը թողուն վանկ մը հովը, թըռչունն ու ձագ՝
Վիշտը հրապույր մ'ե քեզ համար, և փոսն ու փուլ
Շողերուդ տակ կը փալիւրլին ինչպէս սըմբուլ
Սիրտ մըն ես դուն, վնճ, զայն կըզգամ, սիրտ քերթողի,
Յերազներով, հրմայքներով ու խանդով լի,
Կամ մայրիկիդ գիւրկին խըլված աղջիկ մը կույս,
Վոր քողի տակ կը սլաքուրես սարսուռդ ու հույզ,
Դուն չես խոսիլ բընավ, լուսնա՛կ, բայց կը գիտեմ
Թե շատ լայեդ կը տըժգունիս առտըվան դեմ,
Տըխուր նայվածքդ ինձ կը պատմե առատապես
Թե լոկ լույս մը չես դուն ուրիշ գունտերու պես,
Քեզի նման յես ալ ցավեր ունիմ, լուսին,
Չեն հըմայեր զիս այլ կյանքի փնտքերն վոսին.
Հողիս թե մը միայն կ'ուզե, կապույտ փետուր.
Ճառագայթ մը քեզմե, բեկրեկ նըշույլ մը տնւր,
Վորուն կառչած վերաթեւեմ իբրև պարիկ
Մինչև բյուրեղ քու ապարանքդ ողապարիկ
Յես քեզի ձոն տամ իմ հողիս անոր փոխան,
Պատմե իրեն խորհրդավոր իղձերդ համայն.
Թո՛ղ գունտե դունտ սալառնելով մինչև հեռուն,
Արցունքդ ամբողջ տանի ցըրվե հովուն, ծովուն,
Յե՛վ դարերուն վըրա կեցած միշտ անխափան՝
Ըլլա հավետ անմահ սիրույդ քու յերգարան.

Ո Ր Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

Կը մարի լույսն ամպերուն տակ յերերուն.
Ա'լ կը պարզե կյանքի յերազն իբ շողին,
Խորհուրդներու մեջ փաթթելով մեր հոգին,
Դեղնած մարած նայվածքին տակ լույսերուն:

Ա'լ կը պարզե կյանքի յերազն իբ շողին.
Մեր միտքն անդուլ կը թափառի միշտ հետուն
Դեղնած մարած նայվածքին տակ լույսերուն,
Անհոգ, անփույթ վաղվան պետքին ու հոգին:

Մեր միտքն անդուլ կը թափառի միշտ հետուն
Կապված ծագկին, յերգին, շողին ու սյուզին,
Անհոգ, անփույթ վաղվան պետքին ու հոգին:

Կապված ծագկին, յերգին, շողին ու սյուզին,
«Վարդը փուշ և, կ'ըսենք, ձմեռն ալ՝ դարուն»,
Ու կը գիմենք դեպի անդունդը կյանքին:

1892

Ո Ր Ո Ր ՈՒ Մ Ն Ե Ր

(Վ. արիսնիս)

Լեւրան յեաին կը հալի գունան արեուն.
Ըստվերները ցից սարերեն կ'իջնեն վար,
Խառնըվելով շուշան, լելակ ամպերուն,
Ուր կը հաձին մեր անուրջներն ողապար:

Ըստվերները ցից սարերեն կ'իջնեն վար.
Խորհուրդներու լուռ հըմայքովն ակաղձուն՝
Մեր սիրտերը կը բարախեն զերթ կիթառ
Գըզվանքին տակ լուսնին բեհեզ ցոյքերուն:

Խորհուրդներու լուռ հըմայքովն ակաղձուն,
Թողած կյանքի վիշտն ու հըրճվանքն անհամար
Մեր սիրտերը կը վերանան սրտուն:

Թողած կյանքի վիշտն ու հըրճվանքն անհամար
Կապված հովին և յերկինքի բոցերուն,
Յերազի մեջ կը մոռնանք կյանքն ու աշխարհ:

1900

Նոր յելած եր սուգեն, կապույտ կը հագներ.
Գըլուխն ունեք ծավիլ բեհեզ մը սիրուն,
Վորուն վետ վետ ծալքերուն նուրբ ծըփանքներ
Կ'որորվեյին շուրջն իր վոսիլի մաղերուն:

Միշտ լուսեղեն ծիծաղ մ'ունեք իր բերան,
Հընչուն, անուշ, յերգի մը պես սիրարծարծ,
Յե՛վ խրոտվիչ նայվածքին մեջ անոր լայն
Ծոփն իրեն գույն, յերկինք իր շողն եր դըրած:

Սիրած չեք գեռ, վնճ, դայն կ'ըսեր իր ճակատ.
Զըքնաղ յերազ մ'եր լոկ իր կյանքն ըսպխտակ,
Անուրջ մ'անծիր, ուր կույս հողին խանդակաթ
Կը ծածաներ ջերմ իղձերու բոցին տակ:

Բընության մեջ ծոփն եր իր տենչն առանձին.
Ծաղիկներուն, դաշտին համար սեր չունեք.
Ամեն առտու կարմիր արեն այգածին՝
Իր մակույկով ծովուն մեջ դայն կ'ողջունեիր:

Զեյինք գիտեք, պըչըմնք եր թե պարզ ճաշակ
Այդ մակույկն ալ կահված գույնով միշտ ծովուն,
«Կապույտ աղջիկ», կ'անվանեյինք կամ «խաժակ»,
Յերբ կը նավեր փոթորկին դեմ և հովուն:

Զեր վորսար ան, և վոչ ալ գիրք կը կարգար,
Անհունին մեջ մըխըրճեկով իր հողին՝
Կ'ուզեր բաժնեղ շողերուն հետ անդադար
Գաղտնիքները, դոր կուտա ծոփն յերկինքին:

Հովին, վիհին, ալիքներուն բարեկամ,
Հորձանքներին, ամպին, շանթին չուներ վախ,
Այդ անկայուն տարրերուն մեջ շատ անգամ
Կրուված, հաղթած եր ամպրոպին ալերախ:

Բայց զիշեր մը մոտեցավ կուր մը փութով
Սուր ճեղքելով ծալ ծալ ծրփանքն ընդարձակ.
Իր առջևն տեսիլքի պես հոգեթով
Լույս ճակատ մը անցավ գեղով համարձակ:

Լուսնին տարտամ նըշույններուն ներքև ձյուն
Սև ու ծավի աչքեր զիրար հասկըցան,
Յեւ սյուզն աշխույժ անոնց շունչին մեղմ հըծծյունն
Արձագանդեց սիրո բառով մ'աղվածայն:

Խոժոռեցավ իսկույն ծովուն ջինջ յերես,
Մըրրիկ մ'եղավ, մարեց լույսեր, կայծ ու բոց,
Լեռներու պես վեր բարձրացան փրփրազեղ
Կոհակներու անսանձ ամպերն հողմակոծ:

Ա՛լ հորիզոն չըկար, քառս մ'եր յեթեր՝
Ճիվազներու հանդես մը սև ու մըռայլ,
Յերկինք անդուլ սուր փայլակներ կը նետեր,
Շանթ կը տեղար հընոցներեն իր շըռայլ:

Նախանձոտ ծոփն հանկարծ թոթվեց իր ուսեր,
Բացավ թևերն առավ աղջիկն հեշտազին,
Անոր կյանքին հետ հրապույրներն ալ ու սեր
Զուգեց թողուլ կիրքերու մեծ վըտանգին:

1890

Ա՛հ, յեկա՛ր վերջապես, սվ աշուն,
 Այբի հարս վերավոր,
 Աղջիկներ թարմ, մատղաշ ու նախշուն
 Քեզ կ'անձկան, իրավ վոր
 Հողիներ ծաղկահասս յերազուն
 Ըգբեզ միշտ կը պաշտեն,
 Ժողվեկով նըշխարներդ աղազուն
 Անտառեն ու դաշտեն
 Միգամած յերկինքիդ տակ սըբտում
 Սալարչուտ զիշերներ
 Ինչ իզձեր, ինչ խոհեր անպատում
 Կը հըսկեն անհամբեր
 Յեվ յերբ հովդ ըսկըսի թափել վար
 Ծառերեն տերերեր,
 Շատ կյանքեր անոնց պես վողեվար
 Կը մեկնին յերկրեն մեր
 Ինչ ունիս դ'ուն անուշ և չըքնադ
 Քու քողիդ տակ թարուն
 Վոր սըժգունն վերջալույսդ իսկ նվազ
 Չեն փոխեր հետ այգուն,
 Վոչ ալ գոս արտոներդ անմարմանդ
 Կարմըագեզ վարդերուն,
 Վորոնց մեջ ցողն իբրև աղամանդ
 Կը շողա յերերուն
 Քու հրապուշրդ անձանթի և սըբտիս,
 Շընորհքիդ անտարբեր՝
 Վորպեսզի պըշըանքով ինձ ժըպտիս,
 Կը սպասեմ անհամբեր

Անձրևոտ քու աչքերդ այդ հիվանդ
Չունին գեղ ինձ համար,
Դայկահար չոր ճակտիդ մանավանդ
Չեմ բընավ սիրահար.
Զի հոգեր քեզմե շատ ունիմ յես
Հոգվույս մեջ հըրախանձ
Վաղանցիկ տըրտությունդ ալ, գիտես,
Վն՛հ, չ'ազգեր ինձ նախանձ:
Թերթերուդ մեջ ունին դուն յերբեր
Թերթեր նուրբ ու մաշած,
Վորքան թերթն իմ հոգվույս աղերեկ
Զոր վիշտերն են տաշած:
Քու հովերդ ալ տըխտը վոզրերգու.
Չայն ունին բավական
Իմ սըրտիս հուզումներն յերգելու.
Մինչ ժայռերն ալ բզզան
Հեզնությամբ կը նայիմ պատկերիդ
Թախձությամբ լուսավառ,
Վոր արև մ'ե տըժգույն, անժըպիտ
Հոգվույս քով իմ խավար:

1890

Նոր կը լըռեր ծառին յետև
 Սոխակին յերգն այն գիշեր,
 Վարդին թերթերն հով մը թեթև
 Թուփերուն տակ կը քըշեր՝
 Ծառն ուներ շուք, յերկինք նըշույլ
 Լըճակին մեջ սարսըռուն,
 Ուր կը պարզեր սյուզն հեշտասույլ
 Հետ յեթերին կայծերուն
 Հեռուն՝ դյուղին լույսերուն փայլ,
 Հոն՝ քաղաքին լսող շըշուկ
 Մարդին վրա գորտերուն քայլ
 Կը դըժաղեր կայթ մ'անշուք՝
 Յես միայնակ լուռ և խոհուն՝
 Մոռցած աշխարհքը բոլոր,
 Չեյի ըզգար իսկ այն պահուն
 Թե մասն եյի գեթ անոր,
 Կ'ըղձայի վեր յելլել, միշտ վեր,
 Ամպեն ալ վեր, թոհունեն,
 Հոն ուր լույսեր, բույրեր, հովեր,
 Հուրեր գիւրաբ կ'ողջունեն,
 Վհհ, քնչ կա հոն, արև՝ մ'անշեջ
 Ճառագայթնէր, կա՛յծ ու ցող,
 Այդ անըզգա տարբերուն մեջ
 Չըկս՛ գեթ սիրտ մ'ըզգացող
 «—Սքրտ մը կ'ուզես, զայն ունիս դուն,
 Քու հողիեդ անբաժան,

Հընչեց քովես ձայն մ'եռանդուն,
 Միրտ մ'որ քեզ չե անարժան՝,
 Փոքրիկ քույրս եր, հէք Վիրգինյան
 Գեղով փայլուն զերթ դոհար,
 Իր ձեռքին մեջ ձյունի նըման,
 Ծաղկի փունջ մը կը դողար
 Նուրբ ծաղիկներ եյին փափուկ
 Կապույտ, փոքրիկ, ցողաթուրմ,
 Վորոնց անունն ե անմոռուկ
 Հիշատակի վըսեմ քուրմ,
 «—Մ'ի մոռնար զիս, ա'ն սլահե դուն,
 Հարեց իր ձոնն ինձ տալով,
 Թե մոտդ ըլլամ ե թե հեռուն,
 Վն՛հ, միշտ հիշե զիս սիրով՝,
 Գըրքի մը մեջ սլահեցի զայն
 Իրբև գանձ մը թանկագին
 Այդ գորովոտ սիրույն վըկան,
 Ուր անփոփած եր հողին»

• •

Դեռ կը լըսվեր ծառին յետև
 Սոխակին յերգն այն զիշեր,
 Վարդին թերթերն հով մը թեթև
 Թուփերուն տակ կը քըշեր
 Մինակ եյի, լուռ ե խոհուն,
 Քունն աչքերես կուտար խույս,
 Միտքըս կ'երթար հոն այդ սլահուն,
 Ուր կը թևեն սիրտեր կույս
 Ու կ'իջնեյի բարձունքեն վար,
 Միտքըս դատարկ, սիրտս վոսին,
 Զի յերկինքի լույսերն հազար
 Հոգվույս վոչինչ կը խոսին
 Գըրքի եջ մը բացի իսկույն
 Ինձ համար շատ թանկագին,

Յեւ լեցօլեցալ հոգիս անհուն
 Արցունքներով դառնագինս
 Փունջը զըտա, վնճ, փունջն այն սուրբ
 Այն պաշտելի ձեռքին ձոն,
 Յեւ կարգացի գիրերով նուրբ
 «Իս մի՛ մոռնար» զըրօժ հոն
 Ծառն ուներ շուք, յերկինք՝ նըշույլ
 Լըճակին մեջ սարսըռուն,
 Ուր կը պարեր սյուզն հեղատույլ
 Հեա յեթերին կայծերուն
 Այլ, սուր իր ձեռքն, սուր իր պատկեր,
 Ո՞ւր սիրող սիրան այդ տաքուկ,
 Ո՞ւր սև աչքերն իր յուսահետ,
 Ո՞ւր անուշ ձայնն իր փափուկ
 Արդ կը ծածկե ցուրտ գերեզման
 Ձեռքն վոր արվալ այդ նրվեր
 Սիրան, վոր ըզգաց, վնճ, շա՛տ այնքան,
 Հոգերուն տակ և սառեր
 Յեւ գուն հոս ես, միողորբիս,
 Ո՞վ իր սիրուն սին պատկեր,
 Անտը սըբտեն ինձ կը խոսիս,
 Մինչ իր շըրթունքն և լըռեր

1890

Հ Ո Վ, Ը

Թալ թուփերու շուքին տակ
Զիս կը գրգզվե հոյն անհուն
Իր մեղմ շունչով թարմ ու տաք,

Յեզ կ'որորվիմ անհատակ
Յերազներու մեջ փայլուն
Թալ թուփերու շուքին տակ

Սույլ մ'ունի սարգ և հըստակ
Յերբ կը խոսի ծառերուն
Իր նուրբ ձայնովն բայխտակ,

Յեզ շատախոս ճամբատակ,
Ա՛յ սանձ չունի իր լեզուն
Թալ թուփերու շուքին տակ

Ամպերն ի վար շիվ շիտակ
Կ'իջնե սարսուռ մ'անկայուն
Իր դայրույթեն անկատակ,

Կը թափթըփին անզիտակ
Խեղճ ծաղիկներ ազազուն
Թալ թուփերու շուքին տակ

Անդունդին ալքն ու հատակ՝
Վեր վեր ջուրերը ծովուն
Կուտան կուտակ ու կուտակ,

Կը հուզվին զետն ու վըտակ,
Սաղաղ լինեն իակ կ'այտնուն
Թավ թուփերու շուքին տակ:

Կը ցայտեն բուստ ու սուտակ
Փըրփուրներն՝ պաղպաղուն
Ժանյակներով կապուտակ,

Յեւ բաղեղն ու ժատուտակ
Կը գալարին գողգոջուն
Թավ թուփերու շուքին տակ:

Հոփն, ողեղեն սուրհանդակ,
Կը ճեղքե ծոփն յերերուն
Ձերթ ձուկերու գումարտակ:

Հետո, վախկոտ նապաստակ,
Կու գա նիրհել լուռ, թաքուն
Թավ թուփերու շուքին տակ:

Աըշալույսին հետ խայտակ
Կ'ողջունե գարձն արևուն,
Ինչպես թըռչունն ու կոտակ:

Բայց կը մընա հիշատակ
Հետքը իր խոլ խաղերուն,
Թավ թուփերու շուքին տակ:

1892

Ժ Ա Ն Յ Ա Կ Ն Ե Ր Ը

«Շատ նինար ե, շատ ալ տըժգույն», կ'ըսեյին,
Յերբ փողոցեն կ'անցնեք յերկայն մեկնոցով,
Մեջքը սեղմած լարերուն մեջ քորսեյիմ,
Աչքն ալ հովեն պատըսպարած ակնոցով:

Ծըփին մույնքը բարեկամ չեք սևերուն,
Մութ ըզգեստով անշուք աղջիկ մեր խոնարհ,
Սև թավիչե ոձիքն յերկար սևեռուն
Դեմքեն ցուքեր, ուլեն թովքեր կը զօղնար:

Իր քաղաքի արդուգարդոյն ապերախտ
Գեղանի չեք բընավ այդ կիճն աննըման,
Ջօր դիտելով իսկ կ'ըլլայինք բարերախտ
Յերբոր պարի սըրահին մեջ կուզար ման:

Ի՛նչ աղվոր եր ոթյակին մեջ՝ յերբ ճերմակ
Ժանյակով մը լոկ կը սըողեր իր թևեր,
Յե՛վ ուսերուն, լանջքին վըրա անդիմակ՝
Բեհեզի մը թեթև ծալքը կը թևեր:

Մարած, հալած յերանգներու մեջ պես պես՝
Իր սեփական փայլը կ'առնեք դեմքն անոր,
Յեթերային, անծիւր, աննյութ ամպի պես
Միշտ անմատույց, անըրջային և միշտ նոր:

Ժանյակներու այդ փըրփուրներ թափանցիկ,
Ծակտիքն անոնց, ցանցը բարակ ոգային
Յե՛վ մետաքսե ծըփանքն ալ թույլ ցոլացիկ
Բոլոր անձին դյուրթիչ բան մը կուտային:

Ճառագայթ մը, լույս մը, ավյուն մը կյանքի
Մութ նայվածքին մեջ հրապույր մը կ'արծարծեր,
Սորին անդունդ առանց յեղբի ու հանգի,
Վորուն դադանիքն ունին շանթերն ու կայծեր:

Յեւ ժըպիտ մ'ալ, չըքնաղ փըթթում մը վարդի
Կուգար բանալ շըրթունքներուն իր թերթեր,
Ինչպես արևն իր ըզգեստովը դարդի,
Վորուն առջև կը բացվին այգն ու յեթեր:

Յեւ կը բացվեր սիրտն յերազի մը հեշտին
Այդ ժանյակե մըթնոյութին մեջ տարտամ,
Ջերմ, հըմայող դարկ մը տալով իր շեշտին,
Զոր կը պաշտեր քերթողն ու ջոջն ալ փարթամ:

Բայց ամենուն համար սիրտն եր անտարբեր,
Լոկ կը սիրեր պերճ ժանյակներն անապակ,
Վորոնց հըմայքն անձրևի պես կը թափեր
Այնքան խուռկեր, այնքան վարդեր վոտբին սակ:

Կը փայտայեր գանոնք տենչով կաթողին
Կյանքը դըրած անոնց վըրա հոլանի,
Կըրքոտ սեր մը, ուր կար հանճարն ու հողին,
Ինչպես գիտեն սիրել կանայք խելանի:

Սև առտու մը սակայն հաղով մ'արթընցավ
Իր ժանյակե լայն բարձերուն կըռթընամ,
Մեջքին վըրա, կողին վըրա կը զգար ցավ,
Ու կը հևար հոգնամ, դեղնամ, քըրտընամ:

Թատրոնին մեջ ցուրտ եր առեր, կը հիշեր,
Յերբ ոթյակին գուռը բացվեր եր յետին.
Դեկտեմբերի հով մը սաստիկ այն գիշեր
Կը դըրըրդեր անդուլ յերկինքն ու գետին:

Ու մերժեր եր առնել մեկնոցն ուսերուն,
Իր ժանյակներն ըստվերելու յերկյուղով,
Նըշուլագեղ վոստայն ճերմակ ու սիրուն,
Ինչպես աստղով լեցուն ձյունե նուրբ կողով:

Յեվ մեռնով ան ժանյակներուն փաթթելիւմ.
Վերջին շունչին հետ յեղավ հուսկ իր կըտակ,
Ժանյակներով սլըճնել իր մահ, սե՛ քերթված,
Ժանյակներով թաղել մարմինն հողին տակ:

«Ի՛նչ ազվոր ե, կ'ըսեյին, ի՛նչ մանկամարդ»,
Յերբ փողոցն կ'անցնէր դագաղն վողբական,
Յեվ յերգերու, բուրվառներու մեջն ցարդ
Կը ժըպտեր ինք ժանյակներուն սիրական:

1892

Մ Ա Ն Կ Ի Կ Ի Ն Ք Ո Ւ Ն Ը

(Հեօեիուքուն)

Նիրհն, մանկիկս իմ սիրուն,
Անուշ ջունով նիրհն դուն,
Որբանիդ քով յեկան հյուր
Արևն, արծիվն ու գեվյուռ,
Թողած ծովերն, ամպն ու սար,
Համբույր բերել քեզ հաղարձ

Բացավ արծիվն իր թևեր
Գլխուդ վերև վոսիեհեր,
Նըրթունքներուդ վըրա նուռ
Սըրսկեց արվին վարդ և հուր,
Յեվ փայփայեց քամին զով
Այտերդ իր նուրբ բեհեզով:

Նիրհն, մանկիկս իմ սիրուն,
Անուշ ջունով նիրհն դուն:
Բույնը դարձավ գոռ արծիվն.
Մարը մտավ լույս արվին.
Թըռավ զընաց իր մոր քով
Զեվյունն անհուն նաղանքով:

Սյուզին դարձին անձկալիբ՝
Մայրիկն հարցուց. «Ո՞ւր եյիր.
Դեերու հետ կըուկեցար,
Հուզեցիր ծնիլ ու մացառ»:
Իսկ համուշրով մը ջերմին
Պատասխանեց խոլ քամին.

«Յես ծառ ու ծով չեմ հուզեր,
Դե հալածել չեմ ուզեր.
Մանկիկին քով ամեն որ
Ըսի յերգեր ու սրոր.
— Նիրհե, մանկիկս իմ սիրուն,
Անուշ թունով նիրհե գուն»:

1897

Արևն հասած եր սենյակին խորշերուն
Թափանցելով վարագույրին ճեղքն ի վար,
Մինչ կանթեղին յետին նըշույլն յերերուն
Դեռ հիվանդին մահձին վըրա կը հեար:

Ծըփանուա ծով մը վարսերու, մեծ հեղեղ,
Բարձին վըրա կը թափթըփեր իր վսակին,
Վորուն ծուփքը՝ գանգուր թեղեք՝ գերթ բաղեղ
Գալարվելով կ'իյնան վոր հոն սողոսկին:

Չըքնաղ ձեռքին վարդ մասներուն տակ ճապուկ,
Կը պահվըտի գեմք մ'անորոշ, բոլորշի,
Ինչպես ծաղիկ մ'որ սըբրահին խուսափուկ
Ըստվերին մեջ ծըլած՝ լույսին կը խորշի:

Յեվ կը նիրհե. շունչը սյուզի պես բարակ
Մեղմ ու անուշ ըուրվառում մ'ե ըուրմունքի.
Յերագային սերո ցուրեր նուրբ, արագ
Յեղևեջներ կուտան լանջքին հուզմունքի:

Ամսե մ'ի վեր տառապեցալ, հեք աղջիկ,
Ծաղկախաին սև ըոցերուն մեջ հըբախանձ,
Զայն կը լըլիեր տենդը փակած գերթ ջըղջիկ
Իր լույս մարմնույն, վոր կ'աղղեր տենչ ու նախանձ:

Մահն ալ անցավ սը մ'իք քովեն, սե՛, խավաք...
Յուրա սարսուռ մը թափանցեց ներս իր սըբանն,
Յեվ նվազած աչքերուն մեջ հոգեվար
Նայվածքի ըոցն անհուն մարած եր արդեն:

Հետո յերազմ, վըրան ձըգեց վերարկուն,
Մոտենալով դարաններուն ծանրագին,
Վորոնց վըրա հըսկա հայլին կար կանդուն
Ավանդապահ շընորհըներու հըմայքին:

Բայց... նագելի, ջինջ պատկերին տեղ, ամսոյ,
Ծակ ծակ փորված դիմակ մ'երազմ էր առջին,
Ճըճիներե կերված կըմախք մը ճիւղաղ,
Ուր մեծ վորդ մը կըրծած էր փոսն էր վերջին:

Հարվածն անեղ իջավ սըրտին էրբև լախտ.
Ճիչ մ'արձակեց սուր, ցավագին, աղեխարշ.
Հայելվույն դեմ դարկավ գըլուխն էր դըժբախտ,
Աըյունթաթավ ինկավ անշունչ գետնաբարշ:

Ու վաղեցին յեկան փութով նաժիշտներ,
Աըտասվալից մայրիկն հասավ անխափան,
Ամեն կողմե բյուր ոգնություն կը հասներ.
Յեվ տեղացին, բըժիշկիներ, դեղ ու դարման:

Խեղճ ազջիկը բացավ աչքերն արդեն մութ,
Դողղըղալով չոր տերեխ պես տըկար,
«Ա՛լ չեմ սիրեր, մըրմընջեց, կյանքն այս անգութ»,
«Ու, ա՛լ մահվան մըռայլ փոսեն չեմ սոսկար»:

«Ա՛լ թողեք զիս, թողեք վոր շունչըս հատնի,
«Զի գերեզմանն է վայր անել ու անանց,
«Ուր հեք դեմքըս պիտի պահեմ միշտ դադանի՝
«Սե հողերուն վերմակին տակ անթափանց»:

Մահը վոր հոն դարանամուտ կը սպասեր,
Տակավ յեկավ անոր հոգվույն քով տըրտում.
«— Ծաղկախոսն առավ մըրմընջեց գեղդ ու հույսեր՝
Պիտի տանի՛մ յես ալ ցավերդ անպատում»:

Ու անոր գիրին ինկավ աղջիկն հոգեվաթ,
Հոն իր բախտին վըրա լացավ ու լացավ,
Յեվ համբույրով մ'երկայն, խորունկ, խանդավառ,
Այդ թախծության հեշտանքին մեջ հալեցավ:

Արևն հասած եր սենյակին խորշերուն
Թափանցելով վարագույրին ճեղքն ի վար,
Դեռ կանթեղին հետին նըշույլն յերերուն
Հեք մեռելին մահճին վըրա կը հար:

1892

Ծով մը կապույտ կը ծավալի
 Աչքերուդ մեջ, ուր չըկա սեր,
 Ծով մը հանդարտ, ըզմայլելի,
 Ուր կը ցոլան ցայտուն լույսեր.
 Բայց ըզգացումն հոն կը հալի
 Ինչպես տաքին՝ պատառ մը սեր:

Յերբեմն անկե կ'անցնին բարակ
 Ճառագայթներ պայծառ ու ջինջ,
 Ջըղուտ հոգվույդ ցուլքեր կըրակ
 Յերևույթով մ'ազլոր, անջինջ.
 Բայց կը մարին անոնք արագ,
 Ինչպես հովին դեմ կայծ մ'ոչինչ:

Մերթ ծաղիկներ կ'ըլլան փափուկ
 Գորշ կապույտով մանուշակին,
 Այնքան նըրբին և խուսափուկ
 Վոր չունին դույն վորոշակի,
 Բայց կը թափին ինչպես հափուկ
 Դաժան շունչին դեմ խորշակի:

Որ մալ տեանես շատ են հոգներ
Մեծ թախիծի խոհով մ'անանց,
Արցունքներու տակ կայլակներ
Թարթիչներեդ կը մաղվին թաց,
Վոր կը թրվին սև ժանյակներ
Գոհարներու շարքով բանված:

Աշխարհներ են աչքերդ անհուն,
Ուր կան լույսեր, հույզեր հըսկա.
Սառույց, հըրդեհ, բոցեր փայլուն,
ժրպխան ու հույս չեն բացակա.
Կուգան, կ'անցնին անկե սահուն
Գութն ու արցունք. լոկ սեր չըկա:

1892

Կը վազե ան, շուտ շուտ կ'երթա դեպի ծով,
 Յեւ անդունդին վերա ծրուած ծաբավի,
 Կ'ուզե պատուել խութն ու ծրփանքն իր կոծով,
 Ծըծել, քամել, հատցընել ծովն յուրովի:
 Կը վազե ան, շուտ շուտ կ'երթա դեպի ծով:

Թաց նայվածք մը ադոտ աչքին մեջ տարտամ
 Կը թըրթըրա ցընցումներով, թախծազին,
 Յեւ ցավատանջ ըզգացումներ կը կարգամ
 Անոնց հատակն ուր մուրրած ե հողին:

Տենդոտ սարսուռ մ'ունի բերանն իր ցամաք,
 Խընդուկ մ'որ սև որ մ'իւր բերնին ե փակեր,
 Յեւ խոսվածքին մեջ շեշտ մը խոլ ու ճերմակ
 Կը ծիծաղի, յերբ կ'արտասպին իր աչքեր:

Ձայն մ'որ յերգի կը նըմանի սըրտաբեկ
 Նիհար կուրծքեն դուրս կը թըռչի գերթ բողբոջ,
 Խուլ անեծք մը, դոր չե լըսած մարդ յերբեք,
 Հեծկըտուք մը և մաշոդ հազ մ'անողոր:

Հետո, հանկարծ քըրքիչ մ'ահեղ, հեզնական
 Քարին, ժայռին դեմ և լույսին, խավարին,
 Ինչն է չեն լար անոնք կորուստն իր մանկան,
 Կոր ծովն ինկավ, մեռավ անցյալ հունվարին:

Միակ սերն եր գոր իր գըրկեն ծոփն առավ,
Իր կաթոգին պաշտած մանկիկն այն գըվարթ.
Վարդ մ'եր ինքն ալ. կըսկիծն ըրավ գայն պառավ.
«Հեք հիմար կին» կ'ըսե իրեն ամեն մարդ:

Հեք հիմար կին, վոր կը պարե՛լ ալ հիմակ.
Մոռնալով ցափն, անեծքն, արցունքն ու Աստված,
Վար կը նետե իր վիշտերուն սև դիմակ,
Կարծես մանկիկն հոն ե լանջըին փաթթըված:

Բայց կը վազե նորեն կ'երթա դեպի ծով,
Յեվ անդունդին վըրա ծըռած ծարավի,
Կուզե պատուել խութն ու ծըփանքն իր կոծով,
Ծըծել, քամել, հատցընել ջուրն յուրովի.
Ու կը վազե, շուտ շուտ կ'երթա դեպի ծով:

1892.

ԱՐԵՎՈՒ ՃԱՌԱԳԱՅԹԸ

(Հեփոլոքուց)

Զըվարթ առտու մը գարնան,
Յերբ խուցիս բոլոր
Փեղկերը նոր կը բանան,
Ճառագայթ մ'ազվոր,
Արևեն թել մը փըրթած
Ցոյքերով վոսկի՝
Դեռ զիշերվան ցոզին թայ՝
Ներս կը սողոսկի.
Յե՛վ սահելով պատերուն
Ճերմակ ձեփն ի վար,
Նտղանքներով որորուն՝
Շողալով վառ վառ՝
Կը սկսի պար մը դառնալ,
Պար մը խոլ, թեթև,
Ու կը փախչին շուքերն ալ
Բարձերուն յետև
Ճառագայթն արշամասույր
Անիվներ չունի,
Սակայն փափուկ լուսաթույր
Թև մ'ե թըռչունի
Իր խաղն ազվոր և այնքան
Թե՛վ այնքան սիրուն,
Վոր խորհուրդ մը խոլական
Կ'ունենամ իսկույն
Կ'ուզեմ բըռնել վոսկեթել
Լույսիկն այն բարակ,

Շիշի մը մեջ բանտարկել
 Իր կայթերն արագ,
 Մինչև տըխուր ձըմեռ դա
 Յերկիրն ըլլա մութ,
 Լեցվի գաշար շըրջակա
 Զուրերով տըղմուտ
 Յե՛վ ձանձրույթի սև ոճեր
 Յերբ հոգիս տանջեն,
 Ի՞մ ճառագայթս հանեմ վեր,
 Սըրվակի մեջն,
 Վոր գա պարե, ծիծաղի
 Ի՞մ շուրջս հեղանայ
 Մինչև հոգերս անտեղի
 Փըշըին դերթ ավազի
 Ու յետևեն վաղելով
 Շողիկիս պըչըուն,
 Վոր խույս կուտար ինչպես հով
 Շուրջը մոմերուն,
 Բաղմոցներն կ'ելլեր վեր
 Անկողնիս կատար,
 Յե՛վ հետս վար կը ցատկեր
 Ու կը կայծկըլտար,
 Կարծես վըբաս կը խնդար,
 Ու կը խաբեր զիս,
 Հիս դալով շուրջս անզաղար
 Գըլխուս և վըզիս
 Յես կ'ընեյի ամեն ջանք
 Զինքը բընեւու,
 Իսկ ան կուտար ինձ տանջանք
 Փախչելով հեռու
 Վերջապես ձեռքըս ինկավ
 Լույսիկն անապակի,
 Զոր փակեցի բշտապավ
 Նեղ շիշի մը տակ,

Ու պահեցի փաթթելով
Թուղթերու մեջ հաստ
Վոր չբլբուշի ինչպես հով
Շողիկս անըզգաստ
Յերբոր ձըմեռը յեկավ,
Ամպերը սեցան,
Հոծ սաղարթներն ալ կարգավ
Յեզան ցիր ու ցան,
Որ մը, յերբ սիրտս եր կտարած,
Յեվ անձրև կուզար,
Հիշեցի շողըս հանկարծ
Յեվ խոյ մեր պայքար,
Բացի սըրվակս անհամբեր,
Ի՞նչ տեսնեմ, ավանդ,
Մեջեն թըռեր, փախեր եր
Շողիկըս չըբնադ:

1900

Հ Ո Ւ Շ Ե Ր

Հեռուն, հեռուն, լուրթ մըշուշին ծալքին տակ,
 Թըրթըռացող աղոտ լույսին սկես անուշ,
 Նայվածքներ կան մերթ արցունքոտ, մերթ հըստակ,
 Վոր կը հուզեն կյանքիս իղձերն ինձ անհուշ:

Պուրակին թոշ ըստվերներուն տակ մըթին,
 Ուր գեփյուռներ ծաղիկներուն կ'այցելեն,
 Ուր բուրմանց թարմ ծիածաններ կը փըթթին,
 Միշտ կը զըտնե հողիս հուշիկ մ'անցյալեն:

Լայն հոսանք մը՝ վոր ծոպերով լուսածիր
 կը կոծկոծի սորսորելով սարե սար,
 Հուզմունք մ'ունի, տենդ մը վաղըին մեջ անծիր,
 Ուր կը հիշեմ մըտքի ծրփանքս իմ հագար:

Ժապավենի գույն մը կտրմիր կամ գեղին
 կապված ազվոր, փափուկ վըղի մը ճերմակ,
 Բոց մը կուտա հողվոյս մարած կանթեղին,
 Ուր յերազիս թույրերն հալած են հիմակ:

Իրիկվան դեմ սլայծառ ողին մեջ ծավի,
 Զըվարթ սույլեր կը սըլվըլան ինձ ի գնւր.
 Տըխուր վանկ մը, հեք մը, հըծծյուն մը ցավի
